ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ.(0222)94880 arzni_meria@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 14 » հուլիսի 2023 թվականի N 64**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴ - ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի պահանջին՝

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը , թույլատրել օտարել ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի վարչական տարածքում գտնվող՝ 07-016-0205-0001 կադաստրային ծածկագրով , 0.13834 հա մակերեսով ,գյուղատնտեսական պատակային նշանակության վարելահողն աճուրդ - վաճառքի եղանակով :
2.Հողամասի աճուրդ – վաճառքի մեկնարկային գինը սահմանել 415000 /չորս հարյուր տասնհինգ հազար / ՀՀդրամ:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՈՎԱ ՍՈՒՍԱՆՆԱ

ԲԵՆՅԱՄԻՆՈՎ ՌԱԴԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ՏՈՄԱ

ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԽՈՋԱՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ՄԻԽԱՅԼՈՎ ՍՈՒՐԵՆ

ՅԱԿՈՒԲՈՎ ԱՐՏՅՈՄ

ՆԱԴՈՅԱՆ ԶԱԻԼ

ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԻՐԶՈԵՎ



07-016-0205-0001
Авто-газ

Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 060 27 48 04, 060 27 48 05
fax 060 27 48 03
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

aravot daily

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 200 դրամ

134/6906/ 27 հուլիս 2023 հինգշաբթի

ISSN 1829-2224

## Ա

## ՌԴ ԱԳ «մեկնաբանության» վերծանումը

Քանի որ ես որոշակի փորձ ունեմ բանակցությունների լուսաբանման հարցում (այդ թվում՝ հայ-ադրբեջանական), ուզում եմ մի քանի տեղեկություն հաղորդել ընթերցողներին: Եթե X-ը եւ Y-ը բանակցում են Z-ի միջնորդությամբ, եւ Z-ի վրա է դրվում այդ բանակցությունների արդյունքների մասին հայտարարությամբ հանդես գալը, ապա նա այդ հայտարարության մեջ ներառում է այն, ինչ համաձայնեցված է երկու կողմերի հետ: Այդպես էր, համենայնդեպս, 90-ականների առաջին կեսին, եւ չեմ կարծում, որ այդ՝ միանգամայն տրամաբանական դիվանագիտական կանոնը հետագա տասնամյակներում փոխվել է:

Եթե Բրյուսելում Ալիեւը առաջարկել է Արցախին մարդասիրական օգնություն տրամադրել Աղդամով եւ, ենթադրենք, Միշելը դա ողջունել է, իսկ Փաշինյանը դրան կտրականապես դեմ լիներ

## «Հարավային Կովկասի գործերին ՆԱՏՕ-ի ներգրավվածությունը կապակայունացնի տարածաշրջանը». Զախարովա

*Հարավային Կովկասի գործերին ՆԱՏՕ-ի ներգրավվածությունը կապակայունացնի տարածաշրջանը եւ երկար ժամանակով կխեռացնի լիարժեք, լիաֆորմատ խաղաղության կարգավորումը: Երեկ տեղի ունեցած ճեպազրույցում նման հայտարարություն է արել Ռուսաստանի ԱԳՆ խոսնակ Մարիա Զախարովան՝ մեկնաբանելով հայ բարձրաստիճան պաշտոնյաների շփումները Պենտագոնի հետ: Զախարովան նշել է, որ ՆԱՏՕ-ի երկրները, այդ թվում ԱՄՆ-ը եւ Թուրքիան, բարձր հետաքրքրություն են ցուցաբերում Հա-*



...քննարկումը տեղի կունենա 2023 թ օգոստոսի 1-ին, ժամը 16:00 ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ համաձայն, սահմանված կարգով `2023թ. օգոստոսի 7-ին ժամը 14:00-ին, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան խոշորացված համայնքի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի կունենա քաղաքացի Հայկ Ղազարյանի կողմից ներկայացված ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի «Դիլիջան» Ազգային պարկի հատուկ պահպանվող տարածքում հանգստի քոթեջի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկումներ /1-ին քննարկում/: Հեռ.՝ +37498841068

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի և Կառավարության 07:03.2003թ. N217-Ն և N218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է «Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ» ԲԲԸ՝ Արարատի մարզի Մասիս համայնքի Մասիս քաղաքի վարչական տարածքում արդյունաբերական նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից՝ 6.5 լ/վ նոր ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը: Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին և փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մասին (Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ): Ծանուցմամբ ներկայացրած փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2023 թ օգոստոսի 1-ին, ժամը 1600 ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2023թ. օգոստոսի 9-ին ժամը 11:00-ին ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան խոշորացված համայնքի Արամուսի վարչական ղեկավարի նստավայրում տեղի կունենա «Ար-քՆսթրաքշՆ» ՍՊԸ կողմից ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի «Սալմաստ» տեղամասի շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումներ (երրորդ հանրային քննարկում):

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ՝ ք. Երևան, Սեբաստի 31/2 հասցեում,. /հեռ. 091-58-66-35/:

## ՃՇՏՈՒՄ

«ԱՌԱՎՈՏ» օրաթերթի 25 հուլիսի 2023թ. համարում հրապարակված Կոտայքի մարզի, Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցների աճուրդ անցկացնելու վերաբերյալ հայտարարության մեջ հայտերի ընդունման վերջնաժամկետը սխալմամբ գրվել է «օգոստոսի 22-ը ներառյալ»՝ «օգոստոսի 04-ներառյալ» -ի փոխարեն:

Հայտերի ընդունման վերջնաժամկետի ճշգրտված օրը օգոստոսի 04-ն է:

***Ծաղկաձորի համայնքապետարան***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի լրումն «Առավոտ» օրաթերթի 2023 թվականի հուլիսի 22-ի-ի թիվ 131/6903/ համարում ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի կողմից հայտարարված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության մրցույթի հայտարարության, անհրաժեշտ է տեքստում կարդալ՝

ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության մրցույթ: Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի օգոստոսի 21-ին Արզնի համայնքապետարանի շենքում ժամը 12:00:

Մրցույթի է ներկայացվում ստորեւ ընդգրկված հողամասը ըստ գտնվելու վայրի, ծածկագրի, և մեկնարկային գնի՝

❖ 07-016-0322-0091 կադաստրային ծածկագրով, 0.02077 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք - 62310 / վաթսուներկու հազար երեք հարյուր տասը/ ՀՀ դրամ մեկնարկային գնով:

Գյուղատնտեսական նշանակության հողամասերում առկա է մոտեցման ճանապարհ:

Ջրագիծ և կոյուղի չկա:

Հողամասերը սերվիտուտով ծանրաբեռնված չեն:

Մրցույթին մասնակցելու համար ցանկացողները հայտին կից ներկայացնում են աճուրդի մասնակցության վճարի՝ 10000 / տասը հազար/ ՀՀ դրամի և մեկնարկային գնի 15%-ի չափով վճարման անդորրագրերը:

Հայտերն ընդունվում են մինչեւ ս/թ օգոստոսի 16-ը: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Արզնի համայնքապետարան /հեռախոս՝ 022294880/:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի լրումն «Առավոտ» օրաթերթի 2023 թվականի հուլիսի 22-ի-ի թիվ 131/6903/ համարում ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի կողմից հայտարարված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի աճուրդ-վաճառքի հայտարարության, անհրաժեշտ է տեքստում կարդալ՝

ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի աճուրդ-վաճառք: Աճուրդը տեղի կունենա 2023 թվականի օգոստոսի 21-ին Արզնի համայնքապետարանի շենքում ժամը 12:00: Աճուրդի է ներկայացվում ստորեւ ընդգրկված հողամասը ըստ գտնվելու վայրի, ծածկագրի, և մեկնարկային գնի՝

❖ 07-016-0205-0001 կադաստրային ծածկագրով, 0.13834 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող - 415000 /չորս հարյուր տասնհինգ հազար/ ՀՀ դրամ:

Գյուղատնտեսական նշանակության հողամասերում առկա է մոտեցման ճանապարհ:

Ջրագիծ և կոյուղի չկա:

Հողամասերը սերվիտուտով ծանրաբեռնված չեն:

Աճուրդին մասնակցելու համար ցանկացողները հայտին կից ներկայացնում են աճուրդի մասնակցության վճարի վճարման անդորրագիր 10000 / տասը հազար/ ՀՀ դրամ չափով և նախավճարի վճարման անդորրագիր՝ մեկնարկային գնի 50%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդի քայլ է սահմանվում մեկնարկային գնի 5%-ը:

Հայտերն ընդունվում են մինչեւ ս/թ օգոստոսի 16-ը, ժամը 18:00:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Արզնի համայնքապետարան /հեռախոս՝ 022294880/: